ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԲԱԲԳԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՊԱՏՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՎԱՂԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԲԱԲԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԱՊԱՏԵԱՆ, ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԻՆ ՀԱՅՈՑ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ, ՈՐԴՒՈՅ ՄԵՐՈՅ ՀԱՐԱԶԱՏԻ, ՈՂՋՈ՛ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻ՛ՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ, Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ

Աստուծոյ օրհնութեամբ, մեր սուրբ հաւատքի հինաւուրց ամրոցը, Հայաստանեայց Եկեղեցին, այսօր ալ կանգուն է, այսօր ալ ամրակուռ և լուսաշող, և Ս. Հոգւոյ առաջնորդութեամբ իր նուիրական առաքելութիւնը կը շարունակէ հայ հաւատաւոր ժողովուրդի կեանքին մէջ, ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի:

Հայ Եկեղեցին իր այս առաքելութիւնը կը կատարէ և պիտի շարունակէ կատարել, ինչքան ատեն որ հայ ժողովուրդը արժանի մնայ աստուածային ողորմութեան, և ինչքան ատեն որ Տէրը մեր Եկեղեցիին ու ազգին պարգևէ իրենց կոչումին հաւատարիմ ու նուիրեալ սպասաւորներ:

Թէև մեր օրերուն **«հունձք բազում են և մշակք սակաւ»**, սակայն ունինք նաև մշակներ՝ ճշմարտապէս արի և **«առանց ամօթոյ»**, որոնք սուրբ զգացումներով ներշնչուած, իրենց կենդանի խօսքով ու իրենց կենդանի գործերով վառ կը պահեն հաւատքի լոյսը մեր ժողովուրդի հոգիներուն մէջ, օր աւուր առաւել շէնցնելով և պայծառ դարձնելով մեր Ս. Եկեղեցին:

Դուք, սիրելի՛ Բաբգէն սրբազան, մեր օրերու հայ հոգևորականութեան ընտրեալներէն մին էք, մտքով ու հոգիով արթուն և Ձեր գործերով փայլուն: Երկար տարիներ Երուսաղեմայ Սրբոց Յակոբեանց Առաքելական Ս. Աթոռին ծառայելէ յետոյ վինուորեալի հոգիով և անդուլ աշխատանքով, ահա բազմաթիւ տարիներէ ի վեր Ձեր գործունեութեամբ կ'ուրախացնէք Մեզ, իբրև հայրապետական պատուիրակ Հարաւային Ամերիկայի հայոց: Գիտենք, թէ Դուք կը սիրէք Ձեր ժողովուրդը, գիտենք, թէ Ձեր ժողովուրդն ալ կ'Ձեզ կը սիրէ: Ձեր սէրը և Ձեր ժողովուրդի սէրը միատեղ կ'աճին, միասին կը փառաւորուին: Ա՛յդ, Ձեր ոգեկան իրաւ յաղթանակն է, սիրելի՛ սրբազան: Այդպէս է, որ Դուք յաջողութենէ յաջողութիւն կը բարձրանաք մեր եկեղեցական կեանքին մէջ ահա քսանհինգ տարիներէ ի վեր: Կը շնորհաւորենք Ձեզ և Ձեր պայծառ ճակատին կը դրոշմենք Մեր հայրական սիրոյ համբոյրը: Թող Աստուած Ձեզ պահպանէ քաջառողջ, և միշտ լուսաւորէ Ձեր ճամբան: Նոյն հաւատքով, նոյն իմաստութեամբ, նոյն նուիրումով դէպի հայ ժողովուրդը և Հայ Եկեղեցին, և նոյն հաւատարմութեամբ դէպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, աղօթեցէ՛ք և կօրացէ՛ք, աշխատեցէ՛ք և բարձրացէ՛ք, բաշխուեցէ՛ք և հարստացէ՛ք:

Ի գնահատումն Ձեր քսանհինգամեայ հոգևոր նուիրեալ ծառայութեան և Ձեր առաջնորդական յոյժ գովելի գործունէութեան ի Հարաւային Ամերիկա, Մենք սոյն հայրապետական կոնդակաւ Ձեզի կը շնորհենք **արքութեան պատիւ**, մաղթելով, որ Տէրը Ձեզի շնորհէ կենաց երկար տարիներ, որպէսզի Դուք շարունակէք Ձեր նուիրական առաքելութիւնը մինչև խոր ծերութիւն:

«Վասն որոյ յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհսն Աստուծոյ՝ որ են ի քեզ ի ձեռնադրութենէ իմմէ: Զի ոչ ետ մեզ Աստուած հոգի վհատութեան, այլ զօրութեան՝ և սիրոյ՝ և զգաստութեան» (Բ Տիմ. Ա 6—8):

Ս. Էջմիածնէն և Մեր սրտէն Ձեզի սիրոյ ողջո՛յն և օրհնութի՛ւն:

Ս. Էջմիածնէն և Մեր սրտէն սիրոյ ողջո՛յն և օրհնութի՛ւն նաև Ձեր հաւատացեալ ժողովուրդին, Մեր հարազատ զաւակներուն որ ի Արժանտին, Բրազիլիա, Ուրուգուայ, Չիլի և Վենեզուելա:

Թող Աստուած զՁեզ բոլորդ պահէ, պահպանէ ի խաղաղութիւն Իր սուրբ հովանիին ներքև, այժմ և յաւիտեան:

Ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 27-ն յունիսի
1964 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԳ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի: